ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 հուլիսի 2020 թվականի 246 - Ա

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՄԲ ԶԲԱՂՎՈՂ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 12-17-Ը ԸՆԿԱԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՌՄԲԱԿՈԾՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌԱԾ ՎՆԱՍՆԵՐԸ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 1796-Ն որոշմամբ հաստատված թիվ 1 հավելվածի 1-ին կետով, հիմք ընդունելով ՀՀ Տավուշի մարզպետի 2019 թվականի ապրիլի 5-ի թիվ 40-Ա որոշման 3-րդ կետը՝

ո ր ո շ ու մ եմ՝

1. Ստեղծել ՀՀ Տավուշի Բերդ համայնքի գյուղատնտեսությամբ զբաղվող ֆիզիկական եվ իրավաբանական անձանց 2020 թվականի հուլիսի 12-17-ը ընկած ժամանակահատվածում ռմբակոծության պատճառած վնասները գնահատող հանձնաժողով հետևյալ կազմով՝

Վաղարշակ Սուքոյան	- Հանձնաժողովի նախագահ, ՀՀ Տավուշի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ
Վահան Փիրումյան	- Հանձնաժողովի նախագահի տեղակալ, ՀՀ ԱԻՆ ՓԾ Տավուշի մարզային փրկարարական վարչության պետ
Անդամներ	
Ասքանազ Բաբլումյան	- ՀՀ Տավուշի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի վարիչ
Հայկ Փաշինյան	- ՀՀ Տավուշի մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության բաժնի վարիչ
Վասիլ Գալստյան	- ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության Տավուշի մարզային կենտրոնի պետ
Գրիգոր Փայտյան	- ՀՀ Տավուշի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գլխավոր մասնագետ

Միքայել Ղալումյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի քաղաքաշինության վարչության գլխավոր մասնագետ

Արկադի Ամիրխանյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության ավագ մասնագետ

Համլետ Փիրումյան - ՀՀ Տավուշի մարզպետարանի հողաշինության և հողօգտագործման բաժնի գլխավոր մասնագետ

2. Հանձնաժողովին՝ քննարկել համայնքային հանձնաժողովների կողմից ներկայացված ակտերը, տեղում կատարել լրացուցիչ ուսումնասիրություններ և ռմբակոծության պատճառած վնասների գնահատման արդյունքների վերաբերյալ ըստ համայնքների կազմել ամփոփ ակտ և մինչև հուլիսի 30-ը ներկայացնել տեղեկատվություն:

ՄԱՐԶՊԵՏ Հ.ՉՈԲԱՆՅԱՆ

20.07.2020

X

2020թ. հուլիսի 20
ք.Իջևան